

մտտ տան բացատրությունը: Աշխարհի ուրեւորդ հրաշալիք բացատրելուց հետո հզում է նաև Աշխարհի յոթ հրաշալիքները, որը չկա:

Հղումների դեպքում գերազանցապես գործածված է նույնն է, տես-երի շատ քիչ ենք հանդիպում: Սա ճիշտ չէ: Նույն-ի դեպքում մենք հասկանում ենք, որ երկու միավորներն էլ հավասար են գործածվում և հավասարապես էլ ընդունելի են (ե՛ այս, ե՛ այն), այնինչ բառարանում կան այնպիսի գործածներ, որոնց մտտ չի կարելի գծել նույնն է, այլ պետք է գրվի տե՛ս-ը: Յրինակ՝ եղունգը կծել — նույնն է Մատը կծել: Այս երկուսը իմաստով կարող են նույնը լինել, բայց տարածված և ընդունված ձևը մատը կծել-ն է և ոչ թե եղունգը կծել-ը: Վերջինիս մտտ պետք է գրվեր տե՛ս մատը կծելը, որ ճիշտ կլիներ: Աղունգ կծել գործածի մտտ հեղինակալին ոչ մի օրինակ չկա և չէր էլ կարող լինել (եզած օրինակը ինքնահնար է), այնինչ մատը կծել գործածի մտտ կան Պերս Պոռչյանի, Ղազարոս Աղայանի և այլ հեղինակների գործերից վերցված օրինակներ:

Մեր կարծիքով ճիշտ չէ, որ գործածարանական բառարանում տեղ են գտել հարադիր բայերը: Օրինակ՝ պոկ գալ — պոկվել, պոկ տալ — պոկել, շարդ տալ — շարդել, դավ դնել — գավազրել, ձայն տալ — 1) քվեարկել, 2) կանչել, աղաղակել, 3) իմացնել, վերկացնել, արթնացնել և այլն: Սրանք բառի բուն իմաստով գործածներ չեն, այլ բառական արժեք ներկայացնող

միավորներ: Գործածները բառերի կայուն կապակցություններ են, որոնք օգտագործվում են որեւէ միայն պակի պատկերավոր ու արտահայտիչ դարձնելու համար, իսկ ձևն ապ, մուրեքնկնել, լույս տալ, ծուր դնել և այլն գործածներ չեն: Գործածարանական բառարանում մտել են նաև առածանման արտահայտություններ, որ չպետք է լինեին (օր. Խնչ ներելի է Ձևին, ներելի չէ մանկանացուներին, կամ Խնչ որ Բո որը գիտե, այն մեր գլուխը չգիտե և այլն):

Թեև գործածարանական բառարանի հեղինակները աշխատել են լրիվ ներկայացնել ժամանակակից հայերենում գործածվող գործածները, սակայն նրանց տեսադաշտից դուրս են մնացել զգալի թվով ժողովրդական շատ հյութեղ, գեղեցիկ և իմաստալից գործածներ: Օրինակ՝ ասամբ էշփուրելով փոր չի կշտանա, կտավը ներկել: գործը հաջողացնել, շունն իր կրեք (կերակրամանը) չի լիզի, կուզիկին աղչիկ չեն տալիս, ուզում է որ զոհանչն էլ սիրուն լինի, կուծր չրի համվին կկոտրվի, կուծր արևի գորուքյունը չի իմանա, սոխի կողմին սխտոր չեն ձեծի և այլն:

Գործածարանական բառարանի նշված թերությունները մասամբ են միայն սովորում հեղինակների կատարած շեղումների աշխատանքը: Այս նոր աշխատությունը նշանակալից ներգրում է մեր բառարանագրության պատմության մեջ:

Ա. ՔՈՉՈՅԱՆ

Կ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ, Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1976, 271 էջ, գինը՝ 1 ո. 46 կ.:

Բարսեղ Կեսարացու մատենագրական վաստակը շատ է զրաղեցրել հայագետներին, որոնք այս կամ այն չափով անդրադարձել են նրան: Վերջերս լույս տեսավ Կիմ Մուրադյանի նշված ուսումնասիրությունը, որն արդյունք է երկար տարիների տքնաջան աշխատանքի: Հեղինակն ուսումնասիրել է ոչ միայն Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայի» հայերեն թարգմանության ձեռագրերի շուրջ 50 տարբերակները, այլև հայերեն՝ 79, ռուսերեն՝ 25, վրացերեն՝ 4, հին հունարեն և եվրոպական լեզուներով՝ 12 տպագիր սկզբնաղբյուրներ և ուսումնասիրություններ: Այս բոլորը համեմատվել է, դասդասվել, ճշտվել և ընդհանրացվել:

Անառարկելի փաստ է Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայ» աշխատության արժեքը միջնադարյան հայ բնագիտական (և ոչ միայն բնագիտական) մտքի պատմության ուսումնասիրու-

թյան համար, որովհետև հայ բնագիտական միտքը միջին դարերում ներծծված էր Արիստոտելի վերագրված «Յաղագս աշխարհի» և Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայ» աշխատությունների գաղափարներով, որոնք իրենց արմատներով սնվում էին անտիկ Հունաստանի բնագիտական և փիլիսոփայական ուսմունքների սովյալներով:

Քննարկվող ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից (էջ 5—26), հինգ գլուխներից (էջ 27—252), ռուսերեն ամփոփումից (էջ 253—262), անձնանունների և տեղանունների ցանկերից (էջ 263—270):

Ներածության մեջ հեղինակը մի առ մի բնութագրում է այն բոլոր աշխատանքները, որ կատարվել են Բարսեղ Կեսարացու մատենագրության հայերեն թարգմանության ուսումնասիրության ուղղությամբ, սկսած Բարսեղ Կեսարացուց:

րացու «Վեցօրեայ» խորագրով երկասիրությունից (հրատարակված Վենետիկում 1830 թ.) մինչև Պ. Տեր-Պողոսյանի «Ս. Բարսեղ Կեսարացի և իր գրությունները հայերեն թարգմանությամբ» ծավալուն հոդվածը (տպագրված «Հանգես ամսօրյայում», 1968 թ.), փորձելով ընդհանուր պատկերացում տալ հայ բանասիրության մեջ տասնամյակների ընթացքում Բարսեղ Կեսարացու շուրջ ստեղծված գրականության մասին:

Առաջին գլուխը նվիրված է Բարսեղ Կեսարացու կյանքին (էջ 27—54): Այստեղ մանրամասն քննված են նրա ծննդյան թվականի և ազգային պատկանելության վերաբերյալ գիտնականների հայտնած տարբեր կարծիքները, ապա խոսվում է Բարսեղ Կեսարացու ուսումնառության մասին: Այս հարցերի կապակցությամբ Կ. Մուրադյանին սկզբնաղբյուր են ծանուցել Կեսարացու «Վարքը», հատկապես վերջինիս հայերեն թարգմանություն-խմբագրությունները, նրա բազմաթիվ թղթերը, Գրիգոր Նազիանզացու «Դամբանականը», նույն նաղիանզացու թղթերն ու «Վարքը»: Նրա կարծիքով Բարսեղ Կեսարացին մահացել է հիսուն տարեկան հասակում՝ 379 թ. հունվարի 1-ին, հինգշաբթի (էջ 54): Սակայն հիմք ընդունելով Ֆ. Գինցելի «Handbuch der mathematischen und technischen Chronologie (Bd. III, Leipzig, 1914, էջ 411) աշխատությունը, ուր նշված են Ջատի տոների ամսաթվերը, ըստ որի 379 թ. Ջատիկը կլինի ապրիլի 21-ին, կիրակի, մեր հաշվումներով 379 թ. հունվարի 1-ը կլինի ոչ թե հինգշաբթի, այլ երեքշաբթի: Իսկ սույն ուսումնասիրության 54-րդ էջի 118 ծանոթագրությունում մի այլ տվյալով նշված է հունվարի 21, որը կլինի երկուշաբթի, բայց ոչ հինգշաբթի: Ամսաթվի և շաբաթվա օրվա անհամապատասխանության հարցին ուսումնասիրության հեղինակը պետք է որ անդրադառնար:

Կ. Մուրադյանի աշխատության երկրորդ գլուխը նվիրված է Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգությանը (էջ 55—100): Այստեղ քննված են նրա գրեթե բոլոր նամակները, ճառերը, որով հեղինակը ամբողջական պատկերացում է տալիս IV դարում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական կյանքի, հասարակական փոխհարաբերությունների և մարդկային բարոյականության մասին: «Առ ընչեղսն» ճառում Բարսեղ Կեսարացին վեր է հանում մարդկային հասարակության անկման պատճառները: Ըստ նրա, ինչպես ճիշտ եղրակացրել է Կ. Մուրադյանը, մարդը մարդու դեմ հանելու միակ պատճառը հարստության ձգտումն է: Նա դատապարտում է մարդկային պահանջ-

մունքների հարցում չափի զգացումի բացակայությունը: Եվ մարդկանց նման մոտեցումը Բարսեղ Կեսարացին համեմատում է բնության հետ. «Սով գիտե՞լ դսահմանն իւր... իսկ ազահն ոչ... ճանաչէ՞լ դսահմանս... այլ նման է հրոչ բնութեան՝ դամենայն ըմբոնէ, զամենայն ճարակի» (էջ 66):

Այս դիտում է քննված նաև Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայ» ճառը: Կ. Մուրադյանն ապացուցում է, որ այն գրվել է 378 թ. (էջ 74), որ ճառում օգտագործվել են Ս. Գրքի հունարեն, երրայերեն և ասորերեն խմբագրությունները, բանավոր զրույցներ, փիլիսոփայական ու գեղարվեստական տասնյակ գործեր՝ սկսած Հոմերոսի «Ուլիսականից» մինչև Արիստոտելի «Յաղագս մեկնութեան և ստորոգութեան» երկը և այլն (էջ 74—75): Մեր կարծիքով այդ բոլորի հետ Բարսեղ Կեսարացին անշուշտ օգտագործել է նաև Արիստոտելին վերագրված «Յաղագս աշխարհի» աշխատությունը, որը չի նշված այս բաժնում: Բարսեղ Կեսարացու և Արիստոտելին վերագրված երկու աշխատություններում բնական երևույթների առաջացման մասին նման ձևակերպումներ շատ կան:

Հետաքրքիր է Կ. Մուրադյանի եղրակացությունը չարի և բարու մասին Բարսեղ Կեսարացու տեսակետի վերաբերյալ: Մեջբերելով Կեսարացու հետևյալ քաղվածքը՝ «Եւ մեք մի կարծեսցուք եթէ արտաքոյ կամաց մերոց իցեն շարիքն և մի՛ վրիպեսցուք՝ եթէ յառաջագոյն լեալ իցէ: Քանզի իւրաքանչիւր ոք ի մէնչ գիտէ, թէ շարութիւն իւրոց կամացն է, և կարծիք մեղացն՝ դոր ածէ մարդ զմտալ՝ են հակառակորդ բարեաց, որ լինին ի ծուլութենէ՞ ոգւոցն, որ ախորժեն զշարիս» (էջ 76), Կ. Մուրադյանը եղրակացնում է. «Հեղինակը, փաստորեն, առաջադրում է երկու էական հարց. ա) շարիքն աստվածային չէ, և բացառվում է դրա գոյությունը մարդկային միջավայրից դուրս. բ) մարդը շարիք է գործում թի ծուլութենէն» (էջ 76—77):

Այնուհետև Մուրադյանը նշում է, որ Բարսեղ Կեսարացու գրքում հետաքրքիր պատմա-աշխարհագրական տեղեկություններ են պահպանվել Հին Արևելքի մասին, ապա կանգ է առնում ջրագոյացման, գոլորշիացման, բուսականդանական աշխարհի ստեղծման, սրանց համար արևի ջերմության բացառիկ կարևորության և այլ հարցերին Բարսեղ Կեսարացու տված բացատրությունների վրա:

Կ. Մուրադյանն անդրադարձել է նաև Բարսեղ Կեսարացու կողմից արժարժված հոգեբանական առանձին խնդիրների քննարկմանը: Կեսարացին գտնում է, օրինակ, որ չի կարելի մարդկանց մասին դատել, ելնելով սոսկ նրանց

արտաքին տեսքից. «...մարդիկ, որ թագուցանեն զնենգութիւնն, զոր ունին՝ բարի կերպարանօք, զոր ցուցանեն և խաբեն շրջեն զմիտս այլոց իւրեանց յեղիեղով խորհրգովքն» (էջ 85): Ըստ Բարսեղ Կեսարացու, մարդու մեջ մարդկայինը վեր հանելիս պետք է շափանիչ ընդունել նրա աշխատանքային գործունեությունը: Իբրև օրինակ նա բերում է մրջյունի և մեղվի աշխատանքը, իսկ մայր մեղվի օրինակով նա դժգոհում է իր ժամանակի անարժան թագավորների գործերից (էջ 85—86): Բարսեղ Կեսարացին ընդգծում է մարդկանց միմյանց սիրելու, նեցուկ լինելու, հավատով եղբայրանալու, իրար նյութական օգնություն ցույց տալու անհրաժեշտությունը, կապելով այն հավատի դերի հետ (էջ 88):

Երկրորդ գլխի վերջում (էջ 94—100) հեղինակն անդրադառնում է Բարսեղ Կեսարացու եկեղեցական կանոնների մանրամասն բնարկմանը և անում է որոշ եզրակացություններ դրանց կարևորության մասին: Սակայն Կ. Մուրադյանն իր եզրակացությունները հիմնավորելու համար, Բարսեղ Կեսարացու կանոնախմբից՝ բացի, բաղվածքներ է բերել նաև Բարսեղ Կեսարացուն վերագրված, իրականում նրա հեղինակությունը չպատկանող կանոնախմբի՝ մի շարք կանոններից (էջ 99): Միայն մեկ օրինակ. հեղինակը փոխանակ Բարսեղ Կեսարացու կանոնախմբի ԻԴ կանոնը բերելու, բերում է Բարսեղ Կեսարացուն վերագրված կանոնախմբի Դ կանոնը:

Ուսումնասիրության երրորդ գլուխը վերնագրված է. «Կեսարացին և հայերը» (էջ 101—137): Այս գլխի առաջին մասի սկզբում մանրամասն խոսվում է Կապադովկիայի, Փոքր Հայքի և Մեծ Հայքի տնտեսական և մշակութային կապերի մասին (որը սկսվել էր դեռևս հին ժամանակներից), օգտագործելով Ստրաբոնի, Փավստոս Բուզանդի և Մովսես Խորենացու տեղեկությունները, ինչպես նաև Հ. Մարկվարտի, Վ. Բրյուսովի, Հ. Մանանդյանի, Ա. Ալպոյաձյանի, Պ. Խարանիսի, Մ. Աբեղյանի ուսումնասիրությունները:

Մուրադյանի այն կարծիքը, թե Աստվածաշնչից հետո թարգմանվել են Կեսարացու գործերը և որ ներսես Պարթևն է (մահացել է 374 թ.) նախադրյալներ ստեղծել դրանց թարգմանության համար՝ ճիշտ չէ. մանավանդ որ հեղինակը չի խոսում այդ նախադրյալների մասին:

Սույն գլխի երկրորդ մասը նվիրված է մեր

մատենագիրների կողմից Բարսեղ Կեսարացուն տրված գնահատականին: Այստեղ թվարկված են Բուզանդը, Խորենացին, Նազար Փարպեցին, Անանիա Մոկացին, Ներսես Շնորհալին, Վարդան Այգեկցին և ուրիշներ, ինչպես նաև մի քանի հիշատակարաններ, որոնք Բարսեղ Կեսարացու մասին արտահայտվում են դրվատանքի բարձր խոսքերով:

Չորրորդ գլխում բնարկվում է «Վեցօրեայի» հայերեն թարգմանության կարևոր հարցը (էջ 138—204): Ըստ արժանվույն գնահատելով «Վեցօրեայի» հայերեն թարգմանության մեջ մի շարք հայագետների կատարած սրբագրական աշխատանքները, Մուրադյանն իր հերթին կատարում է բազմաթիվ նոր ճշտումներ. հայերեն թարգմանությունը համեմատելով հունարեն բնագրի, վրացերեն և ռուսերեն թարգմանությունների հետ: Այսպես, օրինակ, նա ուսումնասիրության 156—160 էջերում անդրադառնում է մի ընդարձակ նախադասության մեջ նշված «ի սիրտս» և «պատճառ» բառերի իմաստին: Բերելով հայերեն մի քանի ձևագրերից, հունարեն բնագրից, վրացերեն և ռուսերեն թարգմանություններից միևնույն բառերի ճիշտ ընթացումը՝ «ի միտս» (ἰνὸν ἰσῆρτες) փոխանակ «ի սիրտս» և «պատշած» (πῶς οὐχὲν πῶς) փոխանակ «պատճառ», ցույց է տալիս, թե ինչպես են ընդօրինակությունների ժամանակ կատարվել այդ սխալները: Այնուհետև մեջբերելով «Վեցօրեայի» հայերեն թարգմանության մի այլ հատված՝ «և հապստէպ փոփոխեն զերիվարսն և զկառս» (էջ 151, ընդգծումը հեղինակինն է— Վ. Հ.) և դրա հունարեն բնագրի՝ «ἰσῆρτες ἰσῆρτες ἰσῆρτες ἰσῆρτες ἰσῆρτες ἰσῆρτες» (էջ 152, նաև վրացերեն թարգմանությունը), հեղինակը այն թարգմանում է. «կառքերն են փոխվում (=վերալծում) և կառավարները փոփոխում» (էջ 152, նույն էջում տրված է վերջինիս ճշտված գրաբար թարգմանությունը. «և հապստէպ փոփոխեն զկառս[ն] և զկառավարսն»): Սակայն մինչ այդ՝ 151-րդ էջում նա գրում է. «Բնավ չի պատճառաբանվում ընդգծված բառի (այսինքն՝ զկառս— Վ. Հ.) կիրառումը ներկա դեպքում»: Եթե այդպես է, այսինքն հատվածում նշված «զկառս» բառը պետք է լրացնել «ն»-ով՝ «զկառսն», ապա անհասկանալի է, թե ինչու հեղինակը «զերիվարսն» բառը դուրս է գցել: Այնուհետև հունարեն բնագրի «ἰσῆρτες ἰσῆρτες» և «ἰσῆρτες ἰσῆρτες» բառերը թարգմանված են ներկա ժամանակով, մինչդեռ պետք է օգտագործվեր դերբայական ձևը, այսինքն՝ «կառքերը փոխվելով և կառավարներին փոփոխելով»:

Մի այլ օրինակում Կ. Մուրադյանը բերում է «Վեցօրեայի» հետևյալ հատվածը. «Յառաջա-

1 «Կանոնագիրք Հայոց», հատ. Ա, Երևան, 1964, էջ 329—362:

2 Նույն տեղում, հատ. Բ, էջ 101—180:

գոյն քան զարեգակն սարսատէր ցամաքէր հրամանաւ ամենայարդար իմաստութեան» (էջ 155): Նույն էջի 30-րդ ծանոթագրութեան մեջ նշված է. «... ունի արարիչ նշանակությունը»: Նախ՝ է-ի փոխարեն պետք է չինի ՚ի՝ ΔΥΛΙΣΤΑΥΟΣ. երկրորդ՝ ստացվում է, թե հունարեն այդ բառը միայն արարիչ է նշանակում. մինչդեռ բացի դրանից նշանակում է նաև վարպետ, գիտակ, մասնագետ, արհեստավոր, ստեղծող, հեղինակ, մեղավոր, պատճառ, սկզբնապատճառ: Ավելին, այս բառը Պլատոնի մոտ ունի նաև εσφ:α. բնակ Արիստոտելի մոտ՝ εσφ:α, իմաստը (տե՛ս II. X. Дворецкий. Древнегреческо-русский словарь, т. I. М., 1958, էջ 359):

Զորրորդ գլխի երկրորդ մասում (էջ 169—204) մանրամասն խոսվում է «Վեցօրեայի» հայերեն թարգմանության ժամանակի և առանձնահատկությունների մասին: Կ. Մուրադյանը, մեջբերելով հայ մատենագիրների տրվյալների քննության հիման վրա հայագետների հայտնած տեսակետները, ցույց է տալիս «Վեցօրեայի» թարգմանության մոտավոր ժամանակը (420—450 թթ. շրջանում): Այնուհետև բերելով հայագետներ Հ. Տաշյանի, Ն. Բյուզանդացու և Թ. Թոռնյանի կարծիքները, ըստ որոնց «Վեցօրեայի» թարգմանվել է ասորերենից, Կ. Մուրադյանը մանրամասն քննում է այդ հարցը (էջ 186—189) և հակվում Հ. Թորոսյանի կարծիքին՝ «Վեցօրեայի» հունարենից թարգմանված լինելու վերաբերյալ, որի լավագույն կովանը հայերեն թարգմանության մեջ պահպանված հունարանություններն են և այն սխալները, որոնք կարող էին առաջանալ միայն հունարեն բնագրի թյուրընկալումից (էջ 189):

Ուսումնասիրության հինգերորդ գլուխը նվիրված է հայ մատենագրության մեջ «Վեցօրեայի» հետքերին (էջ 205—252): Այս հարցով զբաղվել են անցյալի հայագետներից ուրիշները ևս: Կ. Մուրադյանը ժխտում է ուսումնասիրողներից ոմանց այն կարծիքը, ըստ որի առանձին երևույթների մասին Բարսեղ Կեսարացու տված որոշ բացատրություններ վերագրվում են Անանիա Շիրակացուն (էջ 213—214): Հունարեն բնագրի, վրացերեն և ռուսերեն թարգմանությունների բազմաթիվ օրինակներով Մուրադյանը ստույգ սրբագրություններ է կատարում «Վեցօրեայի» հայերեն թարգմանության մեջ:

Գրախոսվող ուսումնասիրությունը պետք է դիտվի իբրև Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգության հայերեն թարգմանության, հատկապես նրա «Վեցօրեայի» քննական հրատարակության նախապատրաստության հաջող փորձ և հեղինակի կյանքին ու գործին նվիրված անդրանիկ ծավալուն ու արժեքավոր մեկնագրությունը մեզանում: Իբրև այդպիսին, աշխատությունը գերծ չէ որոշ թերություններից, լրացման ու ճշտման կարոտ առանձին կետերից: Սակայն դրանք, ունենալով մասնակի բնույթ, չեն կարող ստվեր նետել նշանակալից արժեք ունեցող այն շնորհակալ գործի վրա, որ կատարել է Կ. Մուրադյանը: Գրքում հիմնականում միշտ են լուսաբանված Կեսարացու կյանքն ու գործունեությունը, հայերի հետ նրա ունեցած առնչության, մատենագրական ժառանգության հայերեն թարգմանությունների ժամանակի և մի շարք ուրիշ հարցեր:

Պատմ. գիտ. դոկտոր Վ. ՀԱԿՈՅԱՆ